

## ՀՅՌԻ Բիրոյի յայտարարութիւնը. ՀՅՌԻ Բիրոյի յայտարարութիւնը. Հայաստան-Ատրպէյճան Յարաբերութիւններու Կարգաւորման Գործընթացի Եւ Անկէ Բխող Պայմանագրի Մասին

Հետեւելով Հայաստանի Հանրապետութեան եւ Ատրպէյճանի Հանրապետութեան միջեւ ընթացող բանակցային գործընթացին, ուսումնասիրելով երկու երկիրներու բարձրաստիճան պաշտօնատարներու յայտարարութիւնները, կ'արձանագրենք.

– քննարկուող փաստաթուղթի համաձայնեցման գործընթացին մէջ, Ատրպէյճան կը ձգտի «սը իւրէ» (De Jure) ամրագրել ուժի եւ ուժի սպառնալիքի կիրարկումով իր ձեռք բերածը՝ ցեղասպանական գործողութիւններով գործադրուած էթնիկ զտման միջոցով Արցախի բռնակցումին եւ ՀՀ որոշ տարածքներու բռնագրաւման մասով՝ միաժամանակ պահպանելով Հայաստանէն այլ զիջումներ կորցելու հնարաւորութիւնը.

– ըստ հոլանդական աշխարհի փաստաթուղթով Ատրպէյճանը կը փորձէ փակել Ար-



ՀՅՌԻ Թար. էջ 6

## Մոնթրէալի մէջ հանդիսաւոր կերպով Աշուտեցաւ ՀՅՌԻ 133-ամեակը



Կարդալ էջ 3

Հուսանկարը՝ Մայք Թաշեան

## Արցախի ժողովրդի հիմնարար իրաւունքների պաշտպանութեան հարցերով յանձնախմբի կազմը կ'ընդլայնուի. Յայտարարութիւն

Արցախի ժողովրդի հիմնարար իրաւունքների պաշտպանութեան հարցերով յանձնախումբը հանդէս է եկել յայտարարութեամբ:

«Ի լրումն 2024-ի Յունուարի 18-ի յայտարարութեան՝ Արցախի հիմնական քաղաքական ուժերի հետ համագործակցութեամբ ձեւաւորուած Արցախի ժողովրդի հիմնարար իրաւունքների պաշտպանութեան հարցերով յանձնախումբը յայտնում է, որ յանձնախմբի նախնական կազմում հետեւեալ անհատներն են?

Վարդան Օսկանեան, ՀՀ արտաքին գործերի նախարար (1998-2008)  
Գեղամ Ստեփանեան, Արցախի մարդու իրաւունքների պաշտպան  
Կարէն Բեքարեան, «Հայաստան» վերլուծական կեդրոնի խորհրդի նախագահ,  
Հայաստան

Մարիո Նալպատեան, Հայ Դատի Կեդրոնական Խորհրդի անդամ, Արժանի Պատգամ  
Կարապետեան, Եւրոպայի Հայ Դատի յանձնախմբի նախագահ, Պեկին Գառնիկ Քրքոնեան, միջազգային իրաւաբան, ԱՄՆ

– Յանձնախմբի կազմը կ'ընդլայնուի՝ ներառելով անհատների Ռուսաստանից եւ Մերձաւոր Արեւելքից:

– Յանձնախմբի գլխաւոր խնդիրը լինելու է Արցախի ժողովրդի՝ միջազգային երաշխիքներով հաւաքական հայրենադարձութեան եւ իր հայրենիքում ապահով, անվտանգ ու արժանապատիւ ապրելու իրաւունքի հետապնդումը եւ պաշտպանութիւնը:

– Արցախի ժողովրդը ցեղասպանութեան սպառնալիքի տակ բռնի տեղահանուած է իր տնից, հողից ու հայրենիքից եւ նրա բնական եւ անքակտելի իրաւունքն է անխոչընդոտ վերադառնալ իր բնօրրանը, շարունակել բնականոն ժողովրդավարական կեանքը՝ իր լեզուի, մշակոյթի, հոգեւոր ժառանգութեան պահպանման, սեփականութեան վերատիրացման, զարգացման եւ կեանքի կազմակերպման՝ միջազգայնորէն ընդունելի նորմերով եւ սկզբունքներով:

– Հակամարտութեան հետեւանքով բռնի տեղահանուածների՝ իրենց հայրենիք

կամաւոր վերադառնալու իրաւունքը ճանաչուած է որպէս միջազգային իրաւունքի նորմ, որը հիմնաւորուած է Մարդու իրաւունքների համընդհանուր հռչակագրով (Ունիվերսալ Դեկլարատիոն ոֆ Հուման Րիղթ), Քաղաքացիական եւ քաղաքական իրաւունքների միջազգային կոնվենցիայով (Ինտերնատիոնալ Յոնվենտիոն ոն Յիվլի անդ Պոլիտիցալ Րիղթ) եւ տարածաշրջանային բազմաթիւ հռչակագրերով:

– Աւելին, 2023-ի Նոյեմբերի 17-ին Արդարադատութեան միջազգային դատարանը (ԻՅՁ) վճռել է, որ Ատրպէյճանի Հանրապետութիւնը պէտք է ապահովի 2023-ի Սեպտեմբերի 19-ից յետոյ Լեռնային Ղարաբաղը լքածների անվտանգ եւ անարգել վերադարձը:

– Յանձնախումբը բազմակողմանի գործունէութիւն է ծաւալելու միջազգային հարթակներում՝ բարձրաձայնելու, ծանօթացնելու, հիմնաւորելու եւ հետապնդելու Արցախի ժողովրդի խնդիրները, շահերը եւ իրաւունքները:

– Յանձնախումբը, վերը նշուած նպատակների կեանքի կոչման համար, մշտական ու հետեւողական աշխատանք է իրականացնելու արցախահայութեան, Հայաստանի հանրութեան ու Սփիւռքի հայրենակիցների հետ՝ նպատակ ունենալով կոնսոլիդացնել բոլոր ստեղծները, այդ թւում՝ քաղաքացիական հասարակութեան, լրատուամիջոցների, ակադեմիական եւ փորձագիտական շրջանակների:

– Յանձնախումբը Արցախի ժողովրդին ներկայացնելու է պետական եւ քաղաքական մարմինների առաջ, ինչպէս նաեւ միջազգային ատեաններում, համաժողովներում եւ միջազգային դատարաններում:

– Ակնկալուած ենք, որ ՀՀ իշխանութիւնները եւ քաղաքական բոլոր ուժերը աջակցութեան եւ համագործակցութեան պատրաստակամութիւն կը ցուցաբերեն Յանձնախմբի գործունէութեանը: Յանձնախումբը պատրաստ է աշխատել անխտիր իւրաքանչիւրի եւ բոլորի հետ, ովքեր պատրաստ են պատասխանատուութիւն ստանձնել՝ համապատասխան լիազօրութիւն ստացած այս յանձնախմբի հետապնդած նպատակների շրջանակներում»:

**HONDA GABRIEL**

THE ALL-NEW 2023 HONDA CR-V TOURING HYBRID

KEVORK ASADOURIAN  
TRO BACHEKJIAN

7000, boul. Henri-Bourassa Est  
Montréal-Nord, (Québec) H1G 6C4  
☎ : 514 327-7777



# Al-Nejmah

MIDDLE EASTERN SUPERMARKET

NOW OPEN  
NOW OPEN



Սեփականատեր  
Յարութ Միփան

Ընտանեկան բացառիկ գործառնություն  
ուր կը գտնէք ձեր բոլոր կարիքները  
ուտելիքներու վերաբերեալ

## IN HOUSE

COFFEE ROASTING & GRINDING  
ROASTING FRESH NUTS  
SESAME GRINDING TO MAKE FRESH TAHINA  
TANOOR BREAD & IRAQI SAMOON

Մուրճ աղալ եւ խարկել  
Հնտեղէն աղալ օրական դրութեամբ  
Շուշմայ աղալ եւ թահինի պատրաստել  
Թոնիքի հաց եւ իրաքեան սոմուն

Supermarket | Restaurant | Bakery | Halal Butcher  
Վաճառատուն, ճաշարան, փուռ, մսավաճառ

PHONE: 289.232.1200  
3085 Hurontario St, Unit 1-6, Mississauga



## Մոնթրեալի մէջ հանդիսաւոր կերպով նշուեցաւ ՀՅԴ 133-ամեակը

Կազմակերպութեամբ ՀՅԴ «Միհրանի Փափագեան», «Սարգիս Զէյթինեան» կոմիտէներու թիւներուն եւ «Արմէն Գարօ» Ուսանողական միութեան, Կիրակի, 28 Յունուար 2024-ին, երեկոյեան ժամը 7-ին, Սուրբ Յակոբ Ազգային վարժարանի «Բաստրմանեան» սրահէն ներս տեղի ունեցաւ ՀՅԴ 133-ամեակին նուիրուած պաշտօնական հանդիսութիւն, ներկայութեամբ Գանատայի Հայոց թեմի առաջնորդ Գերբ. Տէր Բարգէն Արք. Չարեանի, ՀՅԴ Բիւրոյի անդամ Բաֆֆի Տօնապետեանի, ՀՅԴ Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ Խորէն Տրմիթեանի եւ անդամներուն, հոգեւորականաց դասուն, Քեպէզի խորհրդարանի անդամ Սոնա Լախոյեանի, Լաւալի քաղաքապետարանի անդամ Սեդա Թօփուզեանի, քաղաքական կուսակցութեանց ներկայացուցիչներու, քոյր միութիւններու եւ պատկան մարմիններու ներկայացուցչութեանց, ՀՅԴ մեծ ընտանիքի անդամներուն, համակիրներու եւ հոծ բազմութեան:

Ձեռնարկի բացումը կատարուեցաւ ՀՄԸՄ-ականներու կողմէ զբօսակներու մուտքով, փողերախումբին մասնակցութեամբ եւ Գանատայի, Հայաստանի ու Արցախի օրհներգներով, ապա հնչեց ՀՅԴ-ի քայլերգը, որմէ ետք ներկաները մէկ վայրկեան յոտնկայ յարգեցին մեր բոլոր նահատակներուն անմար յիշատակը: Բացման խօսքով հանդէս եկաւ Արազ Տունկեան Տողրամանեան, որ իր խօսքին մէջ յայտնեց. «Դաշնակցութիւնը եւ անոր շուրջ համախմբուած ողջ հայութիւնը պէտք է եւ պիտի գտնէ ներուժը, կամքն ու վճռակամութիւնը փրատակներուն տակէն վերստին ոտքի կանգնելու եւ առաջնորդելու մեր ազգը դէպի նորանոր յաղթանակներ»:

Գեղարուեստական յայտագրով հանդէս եկան ԳԵՄ-ի անդամներ՝ «ՀՅԴ-ի ծնունդ» ներկայացումով, ապա ցուցադրուեցաւ «ՀՅԴ պատմութիւն» տեսերիզ մը, որ հակիրճ կերպով կը պարփակէր ՀՅԴ-ի գործունէութիւնը՝ կազմաւորուելէն մինչեւ մեր օրերը: Ապա

կրկին խումբ մը ԳԵՄ-ականներ ներկայացուցին «ՀՅԴ կազմաւորում» բեմադրումը:

Երոյթ ունեցան Ռուբինա Քիւրէյեան, ներկայացնելով Աւետիս Ահարոնեանի «Ազատութեան ճանապարհին» կտորը, ապա Նոբէհ Պարուսեան՝ «Արծիւ սլացիր» եւ «Պատերազմ էք գնում» յեղափոխական երգերով: «Հերոս տղերք» երգ-տեսերիզի ցուցադրութիւն տեղի ունեցաւ, մասնակցութեամբ Պատանեկան միութեան եւ ԳԵՄ-ի անդամներուն:

Երիտասարդական շարքեր փոխանցուեցան խումբ մը պատանիներ, որուն ընթացքին ԳԵՄ-ի Կեդրոնական վարչութեան անդամ Թալիա Ճապրայեան խօսք առնելով ըսաւ. «Ձեր եռանդով ու խանդավառութեամբ նոր թափ պիտի տաք մեր աշխատանքներուն, ու ձեր նոր գաղափարներով զինուած առաջ պիտի տանինք մեր կազմակերպութիւնը: ՀՅԴ ԳԵՄ-ի շարքերէն ներս դրսեւորուած երիտասարդութիւնը կը մեծնայ ազատ, անկախ եւ միացեալ Հայաստանի իտպալական տեսլականով, որ կ'ընդհարուի մեր էութեան մէջ», ապա խօսքը փակեց ըսելով. «Միանալով Մոնթրէալի եւ Լաւալի «Լեւոն Շանթ» եւ «Բեկոր Աշոտ» մասնաճիւղերուն, մեր փափաքը պիտի ըլլայ, որ անսահման զոհաբերութեամբ մօտենաք ձեր միութենական աշխատանքներուն, ըլլաք տիպար դաշնակցականներ եւ ձեր անձնական օրինակով, վարակէք հայ երիտասարդութիւնը եւ առաջնորդէք զանոնք դէպի Հայ Դատի արդար լուծման պայքարի ճամբան», ապա տեղի ունեցաւ խոստումն ու փոխանցումը, որմէ ետք խումբ մը ԳԵՄ-ականներ կենդանի պատկերով մը ներկայացուցին ՀՅԴ-ի գինանշանը:

Օրուան պատգամաբերն էր Մհեր Գարաբաղեան, որ ողջունելէ ետք ներկաները ըսաւ. «Հայ Յեղափոխական Դաշնակցութեան հիմնադրութեան 133-րդ ամեակը կը թեւակոխենք՝ Արցախի անկումէն չորս ամիս ետք: Անցնող

տարուան վերջին քառօրդին, ազգովին կրկին անգամ ապրեցանք տեղահանութեան ու կորուստի ցաւը, կրկին անգամ ցեղասպանութեան ուրուականը մթազնեց հայոց աշխարհը, ու մեր ամբողջ-Արցախը ինկաւ կարճ բայց հերոսական դիմադրութենէ մը ետք: Ինկաւ ներքին ու արտաքին դաւադրութեանց իբրեւ արդիւնք, ինկաւ մեր մէջ բոյն դրած անտարբերութեան, համակերպման ու պարտուողական վարակին իբրեւ հետեանք, ինկաւ վերջապէս՝ փանթքական ծաւալապաշտական նկրտումներուն իբրեւ թիրախ, անգամ մը եւս հայաթափելով մեր հայրենիքի բազմադարեան մէկ օճախը», ապա անդրադառնալով այս ճգնաժամէն անյապաղ դուրս գալու անհրաժեշտութեան յայտնեց. «Ընդգծենք, որ ճակատագրական այս փուլին հակառակ գահալքէժ անկումը կանգնեցնելն է, վերջին հինգ տարիներուն դիտումնաւոր սրուած ներագային բեւեռացումի եւ պատակտման ճեղքերու վերացումն է, մեր երկրէն ու մեր իսկ մէջէն թրքական Տրոփադայի ձին դուրս շարժելն է, ամէն տեսակի մակաբոյժներէ ու վարձկաններէ ձերբագատիլն է: Եթէ այս մէկը ոմանք պիտի մեկնաբանեն իբրեւ միասնականութեան դէմ կոչ, թող այդպէս ըլլայ: Արդէն ուշ են, արդէն կեղծ է այդ բռնազբօսիկ «միասնականութիւն»ը ու կործանիչ: Կարելի է համատեղել ախտն ու մարմնի դիմադրողականութիւնը՝ ու միասնութիւն ձեւացնել: Այս բոլորին դիմաց՝ ազգային առողջ ուժերու միահամուռ եւ այս անգամ՝ արտակարգ լարուածով կրկին անգամ լծուել է պէտք մեր պետականութեան փրկութեան ու ազգային անվտանգութեան վերականգնման դժուարին բայց անյետաձգելի՝ գործընթացին»:

Եզրափակելով իր խօսքը Գարաբաղեան ըսաւ. «Մեզի կը մնայ ոգի ի բուն, ձեր աշակցութեամբ, պատելով ելլել այս քարտէսները, որովհետեւ Արցախը թէեւ ինկած է այս պահուստ, բայց մեզի համար իր կորուստը վերջնական

չէ՛, չի՛ կրնար ըլլալ ու պիտի չմնա՛յ այդպէս: Ու որպէսզի խօսքը չդառնայ մեռեալ, բոլորո՛վ պարտինք լծուել նպատակալաց, յանդուգն ու անտեղիտալի՛ դաշնակցական գործի: Ուրեմն ի գո՛րծ, սիրելի՛ ընկերներ եւ համակիրներ, ի գո՛րծ՝ թէկուզ եւ երկարաշունչ ըլլայ մեր պայքարը, ի գո՛րծ՝ յանուն մէկ ու ամբողջական հայրենիքի, յանուն մէկ ու ամբողջական հայութեան»:

Հանդիսութիւնը աւարտեցաւ Առաջնորդ Սրբազան Հօր սրտի խօսքով, որուն ընթացքին ան շեշտեց. «Միակամ եւ միասնակամ, Հայաստան թէ սփիւռք, նոր ուղիով վարութեամբ մենք պէտք է շարունակենք մեր պայքարը: Պայքարը կը շարունակուի ու պէ՛տք է շարունակուի, յանուն մեր արժանապատուութեան, յանուն մեր հայրենիքի ամբողջականութեան, յանուն մեր ժողովուրդի յարատեւ գոյութեան»:

Նշենք, որ նախքան պաշտօնական ձեռնարկին սկիզբը, ՀՅԴ Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ Խորէն Տրմիթեանի եւ ՀՅԴ «Լեւոն Շանթ-Բեկոր Աշոտ» մասնաճիւղերու վարչութեան ատենապետ Հրակ Գայաջեանի ձեռամբ, տեղի ունեցաւ ԳԵՄ-ի կողմէ պատրաստուած արցախեան պատերազմներուն բոլոր նահատակներուն նուիրուած յուշատախտակի բացում, որուն ընթացքին նաեւ խօսք առաւ ԳԵՄ-ի Կեդրոնական վարչութեան ատենապետ Մոսիկ Արզումանեան եւ ըսաւ. «Հողը թեթեւ գայ ձեր վրայ անձնուրաց մարտիկներ, ննջեցէ՛ք հպարտ: Դուք որ ձեր զոհողութեամբ մարմնաւորեցիք դաշնակցականի մը անձնաւորութեան իտէլը, նոր սերունդին սորվեցուցիք կառնի մը նման ոտքի մնալ եւ արմատանալ հայրենի հողին մէջ, անբաժանելի մասը դառնալով այդ սուրբ հողին»:

Յիշենք, որ նշեալ յուշատախտակը պիտի տեղադրուի Մոնթրէալի Հայ կեդրոնի ԳԵՄ-ի «Լեւոն Շանթ-Բեկոր Աշոտ» մասնաճիւղերու հաւաքավայրին դիմաց:

Սոնա Թիթիզեան Կէտիկեան

## Արցախի Ազգային Ժողովի Յայտարարութիւն

Ի աջակցութիւն Արցախի՝ «Եւրոպացիները՝ յանուն Արցախի» հարթակի նախաձեռնութեամբ 27 եւ 28 յունուարին եւրոպական տասնչորս երկիրներու աւելի քան յիսուն քաղաքներու մէջ տեղի ունեցան բողոքի տարբեր շարժումներ: Այս ցուցերուն մասնակցեցան Եւրոպայի հայութիւնը եւ տասնեակ մը եւրոպական կազմակերպութիւններ, որոնք իրենց ազգային կառավարութիւններուն եւ համաեւրոպական ղեկավար կառոյցներուն իրենց պահանջն ու յորդորը ներկայացուցին:

Այդ առիթով Արցախի Հանրապետութեան Ազգային Ժողովի չորս խմբակցութիւններ ուղերձ յղեցին այս նախաձեռնութիւններու մասնակիցներուն: Ուղերձին մէջ մասնաւորապէս կը նշուի.

«Այն ամէնը, ինչ տեղի ունեցաւ Արցախում 2020 թուականի 44-օրեայ պատերազմի ընթացքում եւ 2023 թուականի սեպտեմբերի 19-ին Ազրայեյանի եւ Թուրքիայի համագործակցութեամբ, ունի մէկ անուանում՝ Օսմանեան կայսրութեան ժամանակներից սկիզբ առած թուրքական յանցաւոր ծրագրերի շարունակութիւն: 100 տարի առաջ հայ ժողովրդին ցեղասպանութեան ենթարկելու գործողութիւնները կրկնուեցին մեր օրերում, բայց մէկ, չնչին տարբերութեամբ՝ առաջատար դեր վերապահելով Ազրայեյանին»:

Հազարամեայ պատմութիւն ունեցող հայկական Արցախը, որ մշտապէս դիմակայել է տարբեր հրոսակախմբերի ասպատակութիւնների, 21-րդ դարում, միջազգային իրաւունքի անտեսման պայմաններում դէմ յանդիման կանգնեց ազրայեյանաթուրքական ուժերի կողմից 2020 թուականի սեպտեմբերին պարտադրուած պատերազմին, բազում զրկանքներ կրեց 9-ամսեայ համընդհանուր շրջափակման օրերին եւ հրէշաւոր ահաբեկչութեան ճանապարհով 2023 թուականի սեպտեմբերին ենթարկուեց ցեղային զտման: Իրականացուող ցեղասպանութեան ու դրա սպառնալիքի ներքոյ 120 հազար արցախցի հայեր ստիպուած էին հեռանալ իրենց բնօրրանից՝ թողնելով նախնիների հարուստ պատմա-մշակութային ժառանգութիւնը, քրիստոնէական սրբավայրերը եւ սեփական օճախները:

Հայերի հանդէպ Ազրայեյանի իշխանութիւնների ցեղասպանական քաղաքականութիւնը, ատելութիւնն ու թշնամանքը տասնամեակներ շարունակ իր արտացոլումն է գտել Սոււրիայի թից մինչեւ Մարաղա՝ հայաշատ բնակավայրերում տեղի ունեցած ջարդերի, ոճրագործութիւնների միջոցով: Եւ այն իրողութիւնը, որ Արցախի ռազմաքաղաքական ղեկավարները շարունակում են գերեզմաններ մնալ Պաքուի բանտերում, հաստատում է այդ երկրի պաշտօնական շրջանակների կողմից հակահայկական քաղաքականութիւնը շարունակելու մտադրութիւնները:

Եւրոպայի 14 երկրների 50-ից աւելի քաղաքներում յաջակցութիւն Արցախի

նախատեսուող միջոցառումները, վերը նկարագրուած աղէտալի պայմաններում յոյս ներշնչող բացառիկ ազդակներ են: «Եւրոպացիները՝ յանուն Արցախի» հարթակի կողմից կազմակերպուած հերթական միջոցառումը միաւորել է Եւրոպայում ապրող մեր այն հայրենակիցներին, ում համար Արցախը տարիներ ի վեր եղել է ողբերգական աղբիւր, հարիւրաւոր կազմակերպութիւնների, որոնք տարիներ շարունակ աշխատել են Արցախի միջազգային հեղինակութիւնը բարձր պահելու եւ տեսանելի դարձնելու ուղղութեամբ:

Արցախի Հանրապետութեան Ազգային Ժողովի խմբակցութիւնները, արտայայտելով ծանր ու բարդ իրավիճակում յայտնուած արցախահայութեան տրամադրութիւնները, բռնատեղահանուած ժողովրդի անուսից երախտագիտութիւն են յայտնում այն հոգատարութեան եւ աջակցելու պատրաստակամութեան համար, որ ցուցաբերում են հարիւրաւոր եւրոպական կազմակերպութիւններ՝ Արցախին օժանդակելու նպատակի շուրջ օրակարգ ձեւաւորելու մեծածաւալ աշխատանքի միջոցով:

Մենք շնորհակալ ենք նաեւ եւրոպացի մեր բոլոր բարեկամներին, ովքեր տեւական ժամանակ պաշտպանել են Արցախի ժողովրդի ինքնորոշման եւ ինքնիշխան պետութիւն կառուցելու մեր իրաւունքը:

Մեծ եռանդով միանում ենք արդարացիօրէն ցանկազրուած այն յորդորներին ու պահանջներին, որոնք ուղղուել են ձեր նստավայր երկրների կառավարութիւններին ու համաեւրոպական ղեկավար կառոյցներին:

Խորապէս համոզուած ենք, որ համազգային համախմբումը եւ նրա սահմանների ընդլայնումը, հայրենիքում պահանջուած ու սպասուող աշխատանքի իրականացման հետ մէկտեղ կարող են ստեղծել այն նախադրեալները, որոնք անհրաժեշտ են մեր գլխաւոր խնդրի՝ անվտանգութեան միջազգային երաշխիքներով Արցախի ժողովրդի հաւաքական վերադարձն իրականացնելու համար:

Յաջողութիւն ենք մաղթում բոլորիս՝ պատմական այդ առաքելութեան իրականացման ճանապարհին:

Արցախի Հանրապետութեան Ազգային Ժողովի խմբակցութիւններ՝

«ԱԶՍԱՀ ՀԱՅՌԵՆԻՔ-ՔՄԴ»  
«ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ ԴԱԾՆԱԿՑՈՒԹԻՒՆ»  
ԱՐՅԱՆԻ «ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ»,  
«ԱՐՅԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ»

27 յունուար 2024

# «Հօր հայրենիքի փոխարէն, ՀՀ իշխանութիւնները հայ ժողովուրդին կը մատուցեն գոյութեանական սպառնալիքի ենթակայ Հայաստան մը».

Յ. Տէր Խաչատուրեան

Ստորեւ՝ Պէյրութի մէջ կայացած ՀՅԴ 133-Ամ-եակի տօնակատարութիւն. ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր Խաչատուրեանի արտասանած խօսքը:

Կասկած չկայ, որ բախտորոշ օրերու մէջ կ'ապրին հայրենիքն ու հայութիւնը այսօր. ակնյայտ է, որ Հայաստանը յայտնուած է աշխարհաքաղաքական բարդ ու դժուարին կացութեան մէջ, ուր արտաքին ազդակները լարուած են իրեն դէմ. Թուրքիա եւ Ազրպէյճան դարձած են ինքնավստահ, ամբարտաւան եւ անգիջող՝ մեր նկատմամբ. Հարաւային Կովկասի մէջ տարածաշրջանային եւ համաշխարհային ուժերը մեծապէս աշխուժացած են, որովհետեւ քաղաքական փոփոխութիւններու նախանշաններն են նկատուած ու մրցակցական հեւքի են դիմած. Իրադրութիւն մը, որ կը հակադրուի Հայաստանի շահերուն ու մեր հայրենիքը անգամ մը եւս կը դարձնէ միջազգային կռուականներ:

Այս արտաքին իրողութիւնը, սակայն, ոչ մէկ ձեւով կ'արդարացնէ ՀՀ իշխանութիւններու քաղաքական եւ ներազգային այն անաւոր բացթողումները, որոնք կը վտանգեն Հայաստանի լինելիութիւնն անգամ:

Հայութեան եւ Հայաստանի 1990-ականներու յաղթանակները 2020-ի աշունէն արդէն վերածուեցան շարունակական պարտութիւններու շղթայի. արցախեան պատերազմի արձակուրդը եւ հայաթափումը, ՀՀ արտաքին ձախող քաղաքականութիւնը եւ ներազգային պաշտպանութիւնը կը հանդիսանան մեր պատմութեան նորագոյն քառամեակի ՀՀ իշխանութիւններու աղէտալի իրագործումները:

Վերջին երեսնամեակի յաղթական Հայաստանը այսօր աշխարհին կը ներկայանայ որպէս պարտուած ու իր ազգային էութենէն դատարկուած պետութիւն, որ պատրաստ է թշնամիին շնորհելու շարունակական միակողմանի զիջումներ:

Այսօր, իր բնիկ ժողովուրդէն դատարկուած Արցախը ողբերգական հանգամանքէ անդին, նաեւ զրկուած է պաշտպանելու նոյնիսկ Հայաստանի սահմանները, որոնք յարձակումի եւ բռնաբարումի կ'ենթարկուին թուրք-ազերիական ուժերու կողմէ:

Այսօր, հզօր ու ինքնավստահ հայրենիքի փոխարէն, ՀՀ իշխանութիւնները հայ ժողովուրդին կը մատուցեն գոյութեանական սպառնալիքի ենթակայ Հայաստան մը, որուն անկախութեան հռչակագիրն ու սահմանադրութիւնը թշնամիին պահանջով թուլամորթաբար փոփոխութեան ենթարկելու աշխատանքին է լծուած Նիկոլ Փաշինեանի վարակարգը:

Եւ փոխանակ համահայկական կարողականութիւնը համախմբելու այս ճգնաժամային օրերուն, փաշինեանական վարչակարգը տակաւին լծուած է՝ հայութեան մէջ սեւի ու սպիտակի բաժանարար գիծեր ստեղծելու, բանակի որակն ու մարտական ոգին հարուածելու, ՀՀ-ի մէջ ոստիկանական բռնատիրութիւն հաստատելու, Արցախի Հանրապետութիւնը կազմալուծելու, արցախահայկական իրաւունքները անտեսելու, Հայաստանի մէջ Արցախի հիմնահարցին դէմ քարոզչութիւն ծաւալելու, ժողովուրդին եւ մանաւանդ երիտասարդութեան մէջ քաղքենիացում եւ ազգային առումով անտարբերութիւն սերմանելու, ազգային արժէքները՝ հայոց պատմութիւնը, հայագիտական նիւթերը, ազգային հարցերու հանդէպ նուիրումի պատրաստակամութիւնը եւ Հայաստանեայց առաքելական եկեղեցին ու հայ ազգային կառույցները տկարացնելու, Հայ դատի համաշխարհային պայքարը նսեմացնելու, նոյնիսկ սփիւռքի մէջ հաստատուած կառույցները քայքայելու սեւ գործին: Ինչպէս ընտրաշաւներու ընթացքին, նաեւ այս բազմամակարդակ գրոհին համար ՀՀ իշխանութիւնները լայնօրէն ի գործ կը դնեն խորհրդարանական մեծամասնութեան եւ գործադիր իշխանութեան տրամադրութեան տակ գտնուող պետական լծակները: ՀՀ այս իշխանութեան համար չէ մնացած որեւէ ազգային սրբութիւն, այլ միայն՝ ամէն գնով իշխանութիւնը պահելու մտասեւեռում:

Այսօր ոչ միայն հայրենի ժողովուրդը, այլեւ ՀՀ-էն դուրս հայապատկան հողերու եւ սփիւռքի հայութիւնն ալ խոր հիասթափութեան եւ ընկճուածութեան ենթարկուած է՝ ի տես այս իշխանութիւններու ապիկար ու ազգակործան քաղաքականութեան գոյացուցած հակարդ վնասներուն: Հայութեան կարեւոր շերտերու

մէջ յառաջացած է նոյնիսկ Հայաստան-սփիւռք կապերու խզում, ինչ որ անշուշտ անընդունելի երեւոյթ է, բայց նաեւ՝ դժբախտ իրողութիւն:

Մենք կը մերժենք որեւէ յուսահատութիւն եւ յանձնուողական տրամադրութիւն, որովհետեւ կը հաւատանք, որ հայութիւնը իր մէջ ունի ուժականութիւնը՝ պարտութիւններէ յաղթանակ կերտելու եւ իր ազգային արժանապատուութիւնը վերականգնելու: Յամենայն դէպս ՀՅԴ-ին համար վերջին կորուստները ժամանակաւոր են, 2020-ի հետեւանքը ճակատամարտի մը պարտութիւնն էր պարզապէս, եւ թշնամիներուն դէմ պատերազմը կը շարունակուի բոլոր ճակատներու վրայ: Մեզի համար Արցախի բռնի դատարկումը մարդկութեան դէմ գործուած մեծագոյն ոճիրներէն է, որ պէտք է սրբազրուի:

Այս համոզումով է, որ մենք փարած ենք Հայաստանի, Արցախի եւ հայութեան դատի հետապնդման գործին թէ՛ հայրենի եւ թէ՛ համաշխարհային մակարդակներով:

Այսօր, աւելի քան երբեք, անհրաժեշտ է՝ Ա) Կերտել հայրենի եւ համահայկական ազգային առողջ ուժերու համախմբում՝ վերաթարմացնելով համազգային օրակարգը, որուն առաջին յաջող փորձը կատարուած էր Յեղասպանութեան հարիւրամեակի համահայկական համախմբուածութեան օրերուն, եւ որ սակայն մնաց անաւոր ու այս իշխանութեան օրերուն ալ՝ լրիւ անտեսուած:

Բ) Ծարունակել ՀՀ-ի մէջ համախմբել ընդդիմադիր առողջ կուսակցութիւններն ու հասարակական գործիչները միասնաբար պայքարելու ապագային եւ հայութեան խորթ հանդիսացող նկրտումներուն դէմ. ձեռքագտնել ներկայ իշխանութիւններէն, որպէսզի կարելի ըլլայ կերտել ազգային նկարագրով, անհատական ազատութիւններու եւ հաւաքական իրաւունքներու վրայ հիմնուած արդար համակարգ մը եւ ՀՀ-ի քաղաքական դաշտին մէջ պաշտպանել Արցախահայկական իրաւունքները:

Գ) Պաշտպանել Արցախի եւ արցախահայկական իրաւունքները թէ՛ Հայաստանի մէջ, թէ՛ համաշխարհային բեմերու վրայ. արդէն իսկ կազմուած են Արցախի բարեկամներու համաշխարհային խումբեր, եւ կը կազմակերպուին ցոյցեր, հաւաքներ, քարոզչական արշաւներ՝ քողագրեմներով թուրք-ազերի յարձակողապաշտ եւ ցեղասպան միտումները. վերջին օրինակը այս շաբաթավերջի նախաձեռնութիւններն են, որոնք աւելի քան յիսուն քաղաքներու մէջ պիտի ներկայացնեն Արցախի հարցը եւ զայն պահեն միջազգային օրակարգի վրայ: Նեցուկ կանգնել նաեւ, որ Արցախը պահէ իր պետական կառույցները եւ որպէս վտարանդի կառավարութիւն ամբարձր արցախահայկական վերադարձի իրաւունքը մեր բոլորի օժանդակութեամբ: Եւ անշուշտ կայ մարդասիրական երեսը, որ պատերազմի օրերէն իսկ արժանացած է մեր ուշադրութեան եւ համահայկական հոգածութեան. մեր բաժինը, գլխաւորաբար՝ ՀՕՄ-ի աշխուժ ջանքերով, արդէն վաղուց ընթացքի մէջ է եւ յաջողութեամբ կը պսակուի՝ մեծաքանակ տարողութեամբ նիւթական օժանդակութիւն հասցնելով արցախահայկական:

Դ) Համահայկական հոգածութեամբ վերականգնել մարտունակութիւնն ու պատրաստուածութիւնը հայկական բանակին, որ մեր լինելիութեան եւ անկախութեան միակ երաշխաւորն է. ամէն գնով փարի մեր անկախ պետականութեան պահպանման նպատակին՝ քաջ գիտակցելով, որ իշխանութիւնները գնալու են, իսկ պետութիւնը պարտի մնալ մնալու:

Ե) Կերտել ինքնավստահ, նախաձեռնող ու հայկական ակունքներէ բխող արտաքին քաղաքականութիւն, հեռու՝ պարտուողական եւ յարատեւ միակողմանի զիջումներու կողմնորոշումներէ. աւելի քան երբեք անհրաժեշտ է ապաւինել մեր ուժերուն՝ հայկական արեւելումով յառաջ մղելու Հայաստանի ու հայութեան շահերը: Էական է հեռու մնալ Արեւմուտքի հանդէպ կոյր վստահութիւն տածելէ եւ սատարելէ արեւմտեան յոռի բարբերու հայրենիք ներածումին: Պարտաւոր ենք ազգովին անդրադառնալ, որ ո՛չ ամբողջովին արեւմտեան, ո՛չ ալ միակողմանի արեւելեան թեքումներն են, որոնք պիտի բերեն Հայաստանին անվտանգութիւն կամ խաղաղութիւն: Հաւասարակշռուած ու Հայաստանի շահերն իսկապէս պաշտպանող արտաքին քաղաքա-

կանութիւնն է միակ ճանապարհը՝ միաժամանակ շանտեսելով որեւէ շրջանային գերութ, որ կ'առնչուի Հայաստանի ճակատագրին հետ. այս ուղղութեամբ անհրաժեշտ է վերաթարմացնել հայ-ռուսական եւ հայ-իրանական յարաբերութիւնները, որոնք քայքայուեցան այս իշխանութիւններու օրօք: Ազգովին պարտինք պայքարել թէ՛ Արեւմուտքի եւ թէ՛ Արեւելքի պետութիւններու Ազրպէյճանի եւ Թուրքիոյ ունեցած գործակցական սերտ կապերուն դէմ:


Ձ) Վերաթարմացնել եւ արդիականացնել սփիւռքի կառույցներն ու բարձրացնել կազմակերպութեամբ վերանորոգման գործընթացներուն՝ անոնց նոր աւելնեցնելով եւ յաւելեալ վճռակամութեան մղելով. կտրականապէս դէմ ենք սփիւռքը վերակառուցելու կամ վերակազմակերպելու այն սին կոչերուն, որոնք կը միտին հիմնայատակ քանդելու սփիւռքը եւ ասոր կամ անոր շահերուն հպատակեցնելով՝ անձեւ քառս եւ կամակատար հետեւորդներ ստեղծելու: Սփիւռքեան համահայկական թէ՛ տեղական կազմակերպ կառույցները աւելի քան հարիւրամեակէ մը ի վեր տարածուած գործունէութեամբ փաստած են իրենց հայանուէր ու հայրենանուէր պատրաստակամութիւնը. անշուշտ միշտ կարելի է աւելիին ձգտիլ՝ առանց սակայն հիմերը խարխիւլու. հիմնական հարց է նաեւ սփիւռքահայութեան հիասթափութիւնը փարատելու եւ հայրենիքէն օտարելու վտանգը կանխելու. Հայաստան եւ սփիւռք մէկ ամբողջութիւն են եւ, ինչպէս շարունակաբար հաստատուած ենք, յանձնառու սփիւռքը կարեւորագոյն գրաւականն է հզօր հարենիքի, եւ փոխադարձաբար՝ ազգային նկարագրով պետութիւնը լաւագոյն երաշխիքն է սփիւռքի յանձնառութեան եւ հայկական նկարագրի ամրապնդման:

Ե) Աննահանջ շարունակել համայն հայութեան շահերու պաշտպանութիւնը աշխարհով մէջ. ՀՅԴ-ի Հայ դատի հիմնական առաքելութիւններէն է ՀՀ-էն եւ ԱՀ-էն դուրս գտնուող Արեւմտահայաստանի, ջաւախահայութեան եւ առհասարակ աշխարհասփիւռ հայ փոքրամասնութիւններու իրաւունքներու պահպանումն ու ընդարձակումը: Միաժամանակ վառ պիտի պահենք ազգային ազատագրական պայքարի նուիրումը եւ հետապնդենք մեր դատը՝ բոլոր մակարդակներով ու միջոցներով:

Ը) Հայ երիտասարդութիւնը շարունակաբար ներգրաւել, քաղաքականացնել եւ մղել ծառայելու հայրենիքին ու մեր սրբազան դատին: Որպէս գործնական քայլեր թուեմ երբեք այժմէական օրինակներ միայն, առաջինը արդէն իսկ վերաբացուած ՀՅԴ կուսակցական դպրոցն է Հայաստանի մէջ ամուր հիմքերու վրայ դնելու համար երիտասարդութեան ազգային, գաղափարական եւ քաղաքական դաստիարակութիւնը. երկրորդը Հայ դատի վարժողական ծրագրիներն են, որոնք պատրաստած են ու կը շարունակեն պատրաստել նուիրեալ բանակ մը, եւ երրորդը, ինչպէս տեսնեք դեռ երկէ ՀՅԴ Զաւարեան ուսանողական միութեան հրատարակութիւններու շնորհահանդէսին, օրինակն է մեր ուսանողական ու երիտասարդական կառույցներուն, որոնք փարած կը մնան քաղաքական, գաղափարական, ազգային ու յեղափոխական արժէքներու դաստիարակչութեան, տարածման եւ մանաւանդ կիրարկման գործին:

Սիրելի՛ հայրենակիցներ, Ես ալ, իմ կարգիս կ'ուզեմ հաստատել, որ լիբանանահայութիւնը առհասարակ եւ Լիբանանի մեր կառույցը՝ յատկապէս, միշտ եղած են պատնէշի վրայ: Համահայկական բոլոր կարիքներուն հասնող Լիբանանի մեր կառույցը ամէնուրեք գործունեայ է, եւ լիբանանահայութիւնը պիտի մնայ այն հնոցը, որ համահայկական առումով կը հասցնէ գործիչներ, դաստիարակներ, դեկավարներ: Այդ պատճառով է, որ երբ Լիբանանը, որ միշտ կը հասնէ բոլորին, որոշ ժամանակ մը ինք դարձաւ կարիքաւոր, հայաշխարհը ձեռք երկարեց նաեւ Լիբանանին: Բոլորին՝ վարձքը կատար, վստահ ենք, որ նոյն ուժականութեամբ եւ աշխուժութեամբ պիտի մնաք պատնէշի վրայ:

Այսօր ձեր՝ հայ ժողովուրդի առջեւ Դաշնակցութիւնը կը վերանորոգէ իր վճռակամութիւնը՝ մեր երկարաշունչ պայքարը աներեր յառաջ տանելու, հայութեան անժամանցելի իրաւունքները պահպանելու եւ Հայաստանն ու հայութիւնը իր թշնամիներէն աննահանջ պաշտպանելու համար:





# ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

ԵԿԵՂԵՑԻՆ ՏԱՆ ՄԷՋ

ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԿՐՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Է. ՏԱՐԻ, ԹԻՒ 3, Փետրուար 2024



## ՄԵԾ ՊԱՀՔԸ ԱՌԻԹ՝ ԻՆՔՆԱՄԱՔՐՄԱՆ

Մեծ Պահոց քառասորեայ ճամբորդության պիտի մեկնինք: Ինչ պետք է ընել: Քրիստոս մեզ կը թելադրէ ապաշխարել, «Որովհետեւ Երկնքի Արքայութիւնը մօտեցած է» (Մատթեոս 4:17): Սակայն ինչ կը նշանակէ ապաշխարել: Ապաշխարել կը նշանակէ վերափոխել մեր կեանքը: Կը նշանակէ Քրիստոսի ուսուցումներուն հետեւելով խորանալ մեր «հոգետր ես»-ին մէջ, մեր հոգետր կեանքը հարստացնելու եւ ըստ այնմ պատրաստելու մեր սրտերը Յարութեան ուրախութեան: Ապաշխարութեան կոչը դարերու խորքէն եկող արձագանք մըն է՝ մարգարէներուն, Յովհաննէս Մկրտիչին եւ թէ՛ մեր Տիրոջ Յիսուսի Քրիստոսի կողմէ մեզի տրուած յստակ պատգամ մըն է անդրադառնալու մեր սխալ արարքներուն, մեր մեղքերուն: Պատգամ մըն է յատկապէս մեզի ուղուած՝ մեղաւորներու եւ տկարներու հեռանալու այն ուղիներէն, որոնք մեզ կը հեռացնեն Աստուծմէ՛ եւ մեր նմաններէն: Արդ այդ պատգամին համաձայն պետք է ընտրել ապաշխարութեան ճամբան, սրտի եւ մտքի շրջադարձ կատարելու դէպի աստուածայինը:

Մեծ Պահքը առիթը կուտայ մեզի ազնուօրէն քննելու մեր կեանքը, թէ որոնք են այն շեղումներն ու սխալները որոնք մեզ կը հեռացնեն ճշմարիտէն՝ Աստուծմէ: Որքանով սէր, կարեկցանք եւ արդարութիւն կը սերմանենք մեր գործերուն, մեր յարաբերութիւններուն եւ մօտեցումներուն մէջ: Որքանով կը խնամենք մեր հոգիները եւ կը ծառայենք բարիին եւ մանաւանդ կարիքաւորին: Այս հարցերը ճիշդ ուղղութիւնը կուտան եւ կ'առաջնորդեն մեզ Մեծ Պահոց հոգետր ճամբորդութեան: Մէկ խօսքով պահքը թոյլ չի տար յանձնուելու, ընդհակառակը մեզի առիթը կուտայ վերադարձի:

Փորձենք ապահովել մեր հոգետր կեանքի աճը, ողորմութեամբ, աղօթքով եւ ծոմապահութեամբ: Սակայն պայմանը հետեւեալն է ինչպէս կը կարդանք Մատթեոս Աւետարանի 6-րդ գլխուն մէջ. «Եթէ ողորմութիւն պիտի ընենք ո՛չ մարդոցմէ՛ փառաւորուելու ակնկալութեամբ, եթէ մեր Տիրոջ հետ սրտբաց եւ անկեղծ պիտի աղօթենք, ո՛չ կեծաւորներու նման, եւ եթէ ծոմ պիտի պահենք, ո՛չ մարդոց հաճելի ըլլալու համար, այլ քաջ գիտնալով որ անտեսանելի մեր հայրը այս բոլորը կը տեսնէ եւ կը հատուցանէ, կը վարձատրէ մեզ: Մէկ խօսքով պետք է հրաժարինք այն բոլոր սովորութիւններէն եւ արարքներէն, որոնք կը խոչընդոտեն մեր հոգետր աճին. ընդհակառակը պետք է ընտրենք այն գործերը, այն վերաբերմունքը, այն մօտեցումները, այն կեանքը, որ մեզ աւելի կը մօտեցնէ Աստուծոյ եւ կը խորացնէ մեր կապը Իր հետ:

Արդարեւ արթուն եւ պատրաստ ըլլանք, ինչպէս Պետրոսի նամակին մէջ կը կարդանք. «Որովհետեւ ձեր թշնամին, առիծի պէս մոնչելով կը շրջի եւ կլլելու համար մէկը կը փնտռէ» (Ա. Պետրոս 5:8): Արթուն պետք է ըլլանք, «հագովիք արդարութեան զօրհը, կապենք ճշմարտութեան գօտին» եւ յարատեւ աղօթելով, ողորմութեան գործերով եւ ծոմապահութեամբ հեռանանք մեր վատ սովորութիւններէն յաղթահարենք մեր ներքին թշնամիին՝ բանասարկու չարին, այն ատեն մեր հոգետր պայքարին մէջ կը յաջողինք եւ կը յաղթահարենք ամէն դժուարութիւն: Մէկ խօսքով Քրիստոսի հետ խաչի ճանապարհէն անցնելով, չարչարակից դառնանք Իրեն եւ պատրաստ ըլլանք հասնելու Մեծ Օրուան՝ Յարութեան Արշալոյսին:

Հետեալաբար եկէ՛ք հոգետր ու անտեսանելի մեր պայքարը շարունակենք եւ աստուածահաճոյ ճանապարհով ընթանանք եւ ապաշխարութեան ճամբով Մեծ Պահքը նկատենք առիթ՝ ԻՆՔՆԱՄԱՔՐՄԱՆ:

ԲԱՐԳԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Պահքը հաստատուած է եկեղեցոյ հայրերուն կողմէ, որպէսզի մենք հոգեպէս աճինք, ներքնապէս բարեխառնինք եւ մտապէս պատրաստուինք Յիսուս Քրիստոսի Յարութեան տօնը դիմաւորելու:

Պահեցողութեան շրջանը միայն ուսելիքներէ զրկուիլը չէ, այլ ինքնասրբագրութեան շրջան է: Ըլլալու սիրող, համբերատար եւ իրար համար աղօթող:

Ինչպէս երբեմն բժիշկներ որոշ կերակուրներ կամ արարքներ կ'արգիլեն մարդոց, որպէսզի անոնց վնասուած ֆիզիքական տկարութիւնները առողջանան եւ վերաշխուժանան, նոյնպէս նաեւ հոգետր բժիշկներ՝ եկեղեցոյ հայրապետներ եւ վարդապետներ պահեցողութիւնը սահմանած են, որպէսզի հաւատացեալները կարենան աղօթքով եւ ինքնազրկումով իրենց հոգիները բժշկել եւ կատարեալ առողջութեամբ դիմաւորել Յարութեալ Քրիստոսը:

Մեծ Պահքը կը սկսի Բուն Բարեկենդանի կիրակիին յաջորդող երկուշաբթին: Բուն Բարեկենդանի օրը կը ծափուինք, կ'ուտենք, կը խմենք, դրախտին մէջ Ադամին ու Եային հետ կ'ուրախանանք եւ այդ ուրախութիւնը մեր ետին ձգելով կը փորձենք ըլլալ աւելի համբերատար, ժուժկալ եւ աղօթող եւ այսպէս է, որ կ'ապրինք մեծ պահոց շրջանին:

Գեղեցիկ կերպով մը եկեղեցոյ Հայրեր Մեծ Պահքի կիրակիները այնպէս մը դասաւորած են, որ ամէն կիրակի տարբեր աւետարանական պատմութեան մը ընդմէջէն հաւատացեալներ կարողանան զօրացած ու վերանորոգուած դիմաւորել Ս. Զատիկը:

Բուն Բարեկենդանի դրախտաւայել մթնոլորտէն ետք, մենք ալ Ադամին ու Եային հետ մեր գործած մեղքերուն համար դրախտէն վտարուած պէտք է զգանք, որպէսզի կարենանք Անառակ Որդիին զղջումի ու խղճահարութեան զգացումներով ապաշխարել աշխարհի վայելքներէն եւ դառնալ Հայր Աստուծոյ գիրկը:

Յաջորդ հանգրուանով կը սորվինք մեզի տրուած շնորհները ուրիշներու բարիքներուն համար տնտեսել եւ մեր բոլոր դատերը յանձնել միակ արդար դատաւոր Աստուծոյ, որպէսզի ամէն օր մեր աղօթած «Եկեցցէ Արքայութիւն Քո» տողը իրականանայ գալստեան կիրակի օրը:

Մեծ Պահքի ճամբորդութեան՝ Արտաքսման, Անառակի, Տնտեսի, Դատաւորի եւ Գալստեան կիրակիները անցած ըլլալով, մենք ալ Երուսաղէմի մանուկներուն հետ կը դիմաւորենք Յիսուսը, որ յաղթական մուտք գործէ մեր սրտերուն մէջ եւ մաքրագործէ զանոնք:

Աագ Շաբթուան սուրբ օրերուն ընթացքին Պահքի քառասուն օրերու փորձարութիւններէն սորված ըլլալով հոգեպէս զօրացած, Քրիստոսի հետ մենք ալ կը մատնուինք, կանարքուինք, կը չարչարուինք, կը ծաղրուինք, կը խաչուինք, կը թաղուինք, որպէսզի Քրիստոսի հետ այս բոլորէն անցնելով մենք ալ արժանի ըլլանք Իր հետ Յարութիւն առնելու, ուրախանալու եւ Նոր կեանք մը ապրելու:

Հետեալաբար սիրելի ընթերցող, պահեցողութեան այս շրջանը վերասրբագրութեան առիթ մը թող ըլլայ իւրաքանչիւրիս համար, որպէսզի կեանքի նոր էջ մը բանալով անցեալին գործուած մեղքերէն ազատինք եւ ըլլանք օրինակելի քրիստոնէաներ:

Հայր Յակոբ

## ՈՍԿԵՂԵՆ ՀԱՄԱՐ

«Ձեր սէրը թող անկեղծ ըլլայ: Ատեցէ՛ք ինչ որ չար է եւ բարիին կառչած մնացէ՛ք» (Հռոմայեցիս 12.9):

“Love must be completely sincere. Hate what is evil, hold on to what is good.” (Romans 12:9)





**ՄԵՐ ՀԱՅՐԵՐԸ ԿԸ ԽՕՍԻՆ**

**ՇՆՈՐՀԸՆ ՈՒ ՓՈՐՁՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՄԻԱՅՆ ՏԻՐՈՋ ԿԱՌՉԻԸ (ԲԱԺԻՆ Գ.)**

*«Աստուծոյ խոստումներն ու մարգարէութիւնները կը կատարուին զանգան փորձութիւններու եւ դառնութիւններու միջոցաւ, եւ բոլոր անոնք, որոնք միայն Տիրոջ կը կառչին՝ կը փրկուին չարին փորձութենէն»:*

**ՄԷԿ նպատակի վրայ կեդրոնանալ**

10.- Սակայն, անկարելի է, որ ռեւէ մարդ ինքզինք փրկէ եւ երկնային սէրը ձեռք ձգէ, եթէ երբեք ինքզինք չօտարացնէ այս աշխարհին պատկանող բոլոր երեւոյթներէն եւ ինքզինք զոհելով՝ Քրիստոսի սէրը չհանդիմանէ: Աւելին. եթէ ան ինքզինք չմերկացնէ նիւթական բոլոր մտահոգութիւններէն եւ հետաքրքրութիւններէն, որպէսզի ամբողջութեամբ գրաւուի եւ պարապի մէկ եւ միակ նպատակով: Եւ այդ բոլորին մէջ, ան պատուիրաններուն լոյսով ընթանայ, որպէսզի իր բոլոր հետաքրքրութիւններն ու հետապնդումները կեդրոնանան, յայտնաբերելու աննիւթական մտքին էութիւնը եւ գաղտնիքը, թէ հոգին ինչպէս պէտք է զարդարել պատուիրաններով, առաքինութիւններով եւ երկնային զարդերով: Այսինքն՝ Հոգին զարդարանքներով եւ Քրիստոսի անմեղութեան եւ սրբութեան հաղորդակցութեամբ: Որպէսզի, եթէ ամէն ինչ ուրանայ եւ ձերբազատի երկրաւոր ու նիւթական արգելքներէն, ինչպէս նաեւ՝ երկրաւորի սէրէն, սէր՝ հանդէպ ծնողքի, հարազատներու եւ կամ բարեկամներու նկատմամբ, երկրաւոր իշխանութեան, փառքի, պատիւի եւ այլ հարստութիւններու կամ մարմնաւոր ու երկրաւոր երեւոյթներու կառչածութիւն: Իր մտքին հետաքրքրութիւններն ու զբաղմունքները կեդրոնացնելով՝ կարենայ ամբողջապէս յոյսով եւ ակնկալութեամբ սպասել Հոգին իր վրայ հանգչելուն, ինչպէս Տէրը կ'ըսէ. «Եւ ձեր համբերութեամբ պիտի փրկէք ձեր հոգիները» (Ղկ 21.19), նաեւ «Դուք նախ խնդրեցէ՛ք որ Աստուծոյ արքայութիւնը գայ. եւ Աստուած այդ բոլորը անվիճակ պիտի տայ ձեզի» (Մտ 6-38):

11.- Այն մարդը, որ յարատեւ գիտակցութեամբ կը ջանայ ու կ'աշխատի, միշտ զգաստ կ'աղօթէ եւ հնազանդութիւն կը ցուցաբերէ աստուածային գործերուն

մէջ, այդպիսին միայն կրնայ ազատիլ չար սատանաներուն խաւարէն:

**Միայն Աստուծոյ կառչիլ**

Միտքը, որ անհոգ չի գտնուիր ինքնաքննութեան եւ զԱստուած խնդրելու աշխատանքին մէջ, կը փրկէ իր անձը, որ ցանկութիւններով կորսուած էր: Այդպիսին կը փրկէ իր անձը՝ ինքզինք որպէս Տիրոջ սիրոյն գերի ընծայելով, ամենայն նախանձախնդրութեամբ, զօրութեամբ եւ կառչելով միայն մեր երկնաւոր Հօր, ինչպէս որ գրուած է. «Բոլոր մտքերը գերելով՝ Քրիստոսի հնազանդութեան կը բերենք» (Բ. Կր 10.5): Որպէսզի նման ջանասիրութեամբ, կարօտով եւ խնդրանքով միտքը «Կարենայ Տիրոջ հետ մէկ հոգի ըլլալ» (Ա-Կր 6.17): Այս է սոսի Քրիստոսի պարգեւն ու շնորհքը, որոնք ամէն տեսակ բարի գործեր կատարելու պատրաստ հոգիի անօթին մէջ կը հանգչին: Եւ հոգին այ իր ազատ ընտրութեամբ ու յօժարակամութեամբ հեռու կը փախչի աշխարհային մոլորեցուցիչ հրապոյրներէն, փառքէն, պատիւէն, մարմնաւոր ցանկութիւններէն, ինչպէս նաեւ՝ մեղաւորներու եւ զԱստուած ծաղողներու ընկերակցութենէն:

12.- Երբ անձ մը ինքզինք ամբողջապէս Տիրոջ կը յանձնէ, միայն անոր կը կառչի, անոր կամքին համաձայն կ'ընթանայ եւ Քրիստոսի Սուրբ Հոգին անհրաժեշտ պատիւը կ'ընծայէ, այն Հոգին՝ որ իր վրայ եկաւ ու հանգչեցաւ: Այն ատեն միայն այդպիսին արժանի կը համարուի անոր հետ մէկ հոգի եւ մէկ էութիւն ըլլալու, ինչպէս առաքեալը կ'ըսէ. «Ով որ Տիրոջ միանայ՝ անոր հետ մէկ հոգի կ'ըլլայ» (Ա. Կր 6.17): Բայց երբ մարդ ինքզինք այս աշխարհի մտահոգութիւններուն յանձնէ, երկրաւոր ու նիւթական փառք, պատիւ ու անուն հետապնդէ եւ մուրայ, ինքզինք երկրաւոր մտածումներու

գերին դարձնէ եւ կամ երկրաւոր ու նիւթական որեւէ շոշափելի գանձի, այդպիսին, եթէ նոյնիսկ ցանկայ ազատագրուիլ, փրկուիլ ու փախչիլ ցանկութիւններու խաւարէն, որոնցմով կալանաւորած են զինք չարին զօրութիւնները, բնաւ չի կրնար փախչիլ: Եւ հիմնական պատճառն այլ անոր չարին գործերը սիրելն է, ինչպէս նաեւ՝ ամբողջապէս եւ կատարելապէս զանոնք չատելը:

13.- Այդ պատճառով այլ անխախտ հաւատքով եւ անվարան սրտով պէտք է մենք մեզ Տիրոջ գալուստին պատրաստենք, անոր հետեւորդները ըլլանք եւ կատարենք ամէն ինչ՝ որ ան կ'ուզէ եւ «չմոռնանք գործադրել իր հրահանգները» (Սղ 103.18): Ուստի, կատարելապէս մեր անձերը անջատենք եւ հեռացնենք աշխարհասիրութենէն եւ փոխարէնը՝ միայն Տիրոջ կառչենք: Որպէսզի ինք միայն ըլլայ մեր միտքը զբաղեցնողը, մտահոգութիւնն ու միակ փափաքը: Իսկ եթէ կարգ մը մարմնաւոր աշխատանքներու կարիքը ունինք, աշխատանքներ՝ որոնք պարտականութեան եւ Աստուծոյ հնազանդութեան համար տրուած են մեզի, նոյնիսկ այդ պարագաներուն, թոյլ չտանք, որ մեր միտքը հեռանայ Աստուծոյ սէրէն, անոր կարօտէն ու զինք խնդրելէն: Եւ եթէ այս ձեռով միշտ զգաստ եւ արթուն սրտով ջանանք ու աշխատինք ուղիղ մտադրութեամբ քայլել արդարութեան ճանապարհէն, ապա անվարան կը ստանանք իր Հոգին խոստումը եւ շնորհքով կը փրկուինք խաւարին կորուսիչ ցանկութիւններէն, եւ այն ատեն արժանի կ'ըլլանք յափտենական թագաւորութեան եւ Քրիստոսի հետ անվախճան կեանքը վայելելու փառքին՝ փառաւորելով Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին, յափտեանէ մինչեւ յափտեան: Ամէն:

*Մեծն Սուրբ Մակար (Կերթ)*

**GREAT LENT**

**Saint Augustine of Hippo:**

“Fasting cleanses the soul, raises the mind, subjects one’s flesh to the spirit, renders the heart contrite and humble, scatters the clouds of concupiscence, quenches the fire of lust, and kindles the true light of chastity.”

**Saint Clement of Alexandria:**

“As the limbs are governed by the commands of the head, so is bodily service guided by spiritual command... Therefore, let us not be children in understanding: ‘Brethren, be not children in understanding,’ says the Apostle. The way of children is deceitful. For boys are unstable and changeable, so as to say sometimes what is true, at other times what is false.”

**Saint Ignatius of Antioch:**

“A Christian is not his own master; he belongs to Christ. Let us then serve Christ, recognizing that we are in his service. We are not our own; we have given a price for ourselves. Our freedom has been bought at a great price.”

**Saint Irenaeus of Lyons:**

“The business of fasting consists not merely in abstinence from food, but in withdrawing from sinful practices. Since our bodies have been endowed with reason, they are our servants, not our masters. By fasting, we recover what we have lost by intemperance.”

**Saint Athanasius:**

“Fasting is the weapon of protection against demons. Our Guardian Angels are clothed with the armour of fasting.”

**Saint Basil the Great:**

“As physicians have more regard to diet than to medicines; so, with a view to the cure of the soul, rather than to those methods which are external, let us especially apply fasting.”

**ԱՌԱՎՍ ԶԻՆՉ ՅՈՒՑԱՆԷ...**

**ԽԽԽԽԽԽԽԽԽ ԶԳՈՒՇՈՒԹԻՒՆԸ**

Մէկը խխունջը կ'աղաչէր ըսելով.  
- Դուքս եկուր որ այլազան ձեւերով պատուեմ քեզ:  
Խխունջը կ'ըսէ.  
- Մէկը տեսած չէ ուրիշներու հանդէպ պատուասէր ըլլալը, ինչպէս ինծի հանդէպ պիտի ըլլաս: Այդպէս չէ, դուն իմ արեան կը ցանկաս: Եւ դուքս չելլելով, զգուշութեամբ կ'ազատի անկէ:

*Այս առակը կը զգուշացնէ մեզ, որ այլազգիներու խաբէութեան չհաւարանք, նկատի ունենալով անոնց անցեալի խաբէութիւնը ուրիշներու նկատմամբ: Որովհետեւ անոնք ոչ թէ կը պատուեն այլ քրիստոնեաներու արեան եւ ստրագուածքներուն կը ցանկան:*

ՄԽԻԹԱՐ ԳՕԸ

**ՄԻՄԵՆՆ ԾԵՐՈՒՆԻՆ ԵՒ ԱՆՆԱ ՄԱՐԳԱՐԵՈՒՇԻՆ**

Մարիամն ու Յովսէփը Յիսուսի ծնունդէն յետոյ զինք Երուսաղէմի տաճար տարին: Հոն, Սիմէոն անունով Աստուծոյ հաւատարիմ ծերունի մարդ մը կար: Ան գիտէր, որ Յիսուս բոլոր մարդոց փրկիչն է, եւ երկար տարիներ սպասեր էր Յիսուսի ծնելուն: Երբ տեսաւ, շատ ուրախացաւ գրկեց Յիսուսը եւ ըսաւ.

- Ով Աստուած, հիմա հանգիստ կրնամ մտնիլ: Տաճարին մէջ կը ծառայէր նաեւ Աննա անունով բարեպաշտ կին մը: Երբ տեսաւ

Յիսուսը, ըսաւ.

- Ասիկա Աստուծոյ Որդին է՝ աշխարհի Փրկիչը:

ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՅԻ ԱՇԱԿԵՐՏԻՆ ԳՐՔՈՅԿԸ

**ՓԱԿԵԱԼ ԽՈՐԱՆ**


Բուն Բարեկենդանը կանխող Շաբաթ երեկոյեան խորանին վարագոյրը կը գոցուի եւ միանգամայն ծիսակարգի փոփոխութիւն տեղի կ'ունենայ:

Ս. Սեղանը կ'առանձնանայ հաւատացեալներու տեսողութենէն եւ Ս. Աւետարանը սեւ քօղով կը պարուրուի: Տէրունի եւ սուրբերու ռեօկոչումները տեղի կու տան զըջումի, ներհայեցողական կեանքի եւ ապաշխարութեան աղօթքներուն ու շարականներուն:

Նախաձնողներու մեղքը ժառանգած մարդը, եկեղեցոյ յարկէն ներս ինքզինք դէմ յանդիման կը գտնէ աստուածային սիրոյ եւ գութի հայրական կեցուածքին եւ զըջումն ու ապաշխարութիւնը կը դառնան գրաւական մեր մեղքերու ներման եւ քաւութեան:

Մեծ Պահքի շրջանն է այս, որ 48 օրերու տեսողութեամբ կը ներկայանայ մեզի: Մեծ Պահոց առաջին օրը մեր ժողովուրդին կողմէ կոչուած է փակեալ Խորան, որովհետեւ եկեղեցոյ վարագոյրը գոց է եւ Ս. Սեղանը ծածկուած հաւատացեալներու տեսողութենէն: Խորանին փակուիլը հրաւիր է, որ մեր հոգիներուն եւ սրտերուն վարագոյրները փակենք արտաքին աշխարհին եւ վայելքներուն առջեւ, եւ զրկանքով ու ներհայեցողական կեանքով որոնենք նոր կեանքի մը արշալոյսը, որ հրաշափառ Ս. Յարութեամբ պիտի ծագի մեր կեանքին մէջ:





### ՏԵԱՌՆԵՆԴԱՌԱԶ

«Այժմ, ղկ Տէր, համաձայն քու խոստումիդ՝ ձգէ որ ծառայ խաղաղութեամբ մեռնի. որովհետեւ աչքերովս տեսայ Փրկիչը»: (Ղկ. Բ. 29)

Յիսուսի քառասնորեայ տաճար ընծայման տօնն է Տեառնընդառաջը: Օրմանեան Սրբազան բառը ստուգաբանած է, ըսելով. - Ելանել ընդ առաջ Տեառն, Տիրոջ ընդառաջ երթալ, Տիրոջ այցի երթալ: Իսկ անցեալի ժողովրդային խօսակցութեան մէջ կ'ըսուէր՝ Տէրնտես, այսինքն Տիրոջ տեսութեան երթալ:

Ինչ էր առիթը այս այցելութեան:

Ղուկաս Աւետարանիչ հետեւեալ տեղեկութիւնը կու տայ. «Յովսէփն ու Մարիամը մանուկը Երուսաղէմ տարին Տիրոջ ընծայելու համար, որովհետեւ Տիրոջ Օրէնքին մէջ գրուած է.- Տիրոջ պէտք է նուիրուի ամէն արու զաակ, որ մօրը

առաջին զաակն է. ինչպէս նաեւ Տիրոջ Օրէնքին համաձայն զոհ մատուցանելու՝ զոյգ մը տատրակ կամ աղանիի երկու ձագ » (Ղկ 2.22-24):

Ահաասիկ վերոյիշեալ օրէնքին համաձայն էր, որ Յովսէփ ու Մարիամ Յիսուսը տաճարին ընծայեցին:

Ընծայման այս Խորհուրդին մէջ, անշուշտ թէ հրէական ասանդութեան գործադրութիւնը կար, բայց հիմնական եւ կարեւոր դէպքը՝ ինչ որ տաճարին մէջ պատահեցաւ, Սիմոն ծերունիի Յիսուս մանուկի ապագայի մարգարէութիւնն էր:

Ինչպէս կ'ըսէ Սրբազան Աւետարանիչը. - «Սիմոն իր գիրկը առաւ փոքրիկը եւ գոհաբանեց զԱստուած, ըսելով. - Այժմ ղկ Տէր, համաձայն քու խոստումիդ՝ ձգէ, որ ծառայ խաղաղութեամբ մեռնի որովհետեւ աչքերովս տեսայ Փրկիչը, որ ղրկեցիր բոլոր ժողովուրդներուն, որպէս լոյս՝ հեթանոսները լուսատրելու եւ քու ժողովուրդիդ՝ Իսրայէլի փառքը ըլլալու», (Ղկ 2.28- 32):

Քրիստոս որպէս յաւերժական Լոյս՝ աշխարհ եկաւ եւ որպէս Լոյս՝ աստուածային իր առաքելութիւնը կատարեց:

Ահա թէ ինչու 13 Փետրուարի երեկոյեան՝ Տեառնընդառաջի նախատօնակին, եկեղեցոյ Մայր Խորանի կանթեղէն ստացուած լոյսը կը բաշխուի ժողովուրդին, եւ հաւատացեալներ այդ լոյսը վառած մոմերով տուն կը տանին:

Նոյն լոյսով կը բռնկեցնեն նաեւ խարոյկը, ինչ որ ասանդութեամբ մեզի փոխանցուած սովորութիւն մըն է:

Ոմանք զայն կը նկատեն հեթանոսութենէ փոխանցուած տօնի մը մնացորդացը:



### ՎԷՄՔԱՐ

Վէմքարը, Սրբալոյս Միւռնոնով օծուած այն մարմարեայ քարն է, որ եկեղեցոյ չգոյութեան պարագային, կարելի է զայն սրահի մը մէջ, սեղանի մը վրայ դնել եւ Ս. Պատարագ մատուցանել:

Վէմքարին վրայ պէտք է քանդակուած ըլլայ Սուրբ Խաչը:

Վէմքարի գործածութիւնը յատկապէս ընդհանրացած էր գաղթականութեան օրերուն, երբ պարզ հաւաքատեղիներուն մէջ կը կատարուէին Ս. Պատարագները:

Իսկ այսօր, գրեթէ մեր բոլոր գաղութներուն մէջ օծեալ եկեղեցիներ ունինք, օծեալ Սուրբ Սեղաններով:

Այսուամենայնիւ, առաջնորդարաններ եւ եկեղեցիներ իրենց տրամադրութեան տակ պէտք է ունենան վէմքար մը, անակնկալ պարագաներուն գործածելու համար:

Այստեղ պէտք է արձանագրել, որ երբ եկեղեցոյ Սուրբ Սեղանը տախտակաշէն է, վէմքարը անպայմանօրէն անոր կեդրոնը պէտք է դրուած ըլլայ, որպէսզի պատարագիչ եկեղեցականը Սուրբ Սկիհը անոր վրայ հանգչեցնելով կատարէ Սուրբ Պատարագը:

### ԱՂՕԹՔ ՍՈՒՐԲ ԵՓՐԵՄ ԽՈՒՐԻ ԱՍՈՐԻԷՆ

Մեղանչեցի եզի դէմ, Տէր, մեղանչեցի, որովհետեւ յանցապարտ գտնուեցայ պատուիրաններուդ: Կեանքի լոյսէն ելլելով՝ մեղքի խաւարին մէջ մտայ. աղտեղութեանց ցանկալով՝ քու սէրէդ հեռացայ. չարէն բռնուեցայ եւ կորստեան որդի եղայ: Ողորմէ ինձի բազմամեղիս, Բարերար, որովհետեւ միայն Դուն մարդասէր ես:

Քեզի ապաւինեցայ, Տէր, որ մեղաւորներու քաւարան ես, բարիի՝ շտեմարան, փախչողիս՝ ապաստանարան, թշնամիս ըրէ փախստական: Ո՛չ որ ունիմ անձիս պահապան: Փրկէ վտանգէ, ազատէ որոգայթներէ, եւ արժանացուր զիս յախտեանական լոյսի որդիդ ըլլալու:

Ողորմէ ինձի, կեանքի Տէր, մեղքերուս քաւիչ եւ խնդրանքներուս կատարիչ, կապանքներէ արձակող, պարգեւներ բաշխող, եւ շնորհքներ տուող:

Տէր, լսէ աղաչանքս եւ ընդունէ պաղատանքս: Քաւէ յանցանքներս եւ կատարէ խնդրանքներս. արձակէ կապանքներս եւ բժշկէ հոգիս. առողջացուր մարմինս եւ ուղղէ ճամբաս: Փութացուր զիս որպէսզի սուրբերուդ օթեանը ժամանեմ:

### ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԶԻՆ ԿԱՆՈՆԸ

#### ԿԱՆՈՆԱԿԱՆ ԵՒ ՈՉ-ԿԱՆՈՆԱԿԱՆ ԳԻՐՔԵՐ

Աստուածաշունչը գիրքերու ամբողջութիւն մըն է: Երբ եւ ինչպէս այս գիրքերը իրարու քով եկան, կազմելու համար մէկ ամբողջութիւն, եւ ղկ իրարու քով բերաւ զանոնք: Հարցումը կարեւոր է, որովհետեւ այդ գիրքերը, գրուած մէկ առ մէկ, պատմական բաւական երկար ժամանակաշրջանի մը վրայ, որ չորս 1500 տարիներ կ'ընդգրկէ, պատահականօրէն իրարու քով եկած չեն: Անոնց մէկտեղումը արդիւնք է ընտրութեան մը, որ կատարուած է որոշակի սկզբունքի մը հիման վրայ, Աստուծոյ ժողովուրդին առաջնորդութեան կոչուած անձերուն համախումբ որոշումով:

Կը բաւէ կարդալ նոյնինքն Աստուածաշունչը, տեսնելու համար, թէ անցեալին եբրայեցի ժողովուրդին հոգեւոր թէ ընկերային-քաղաքական կեանքի զանազան երեսները միայն մէկ արձանագրութիւն չեն ունեցած, այլ գրի առնուած են բազմաթիւ կերպերով: Այսպէս, օրինակ.

1.- Աստուածաշունչը կը յիշատակէ, որ Եգիպտոսէն ելլող եբրայեցիները ամորհացիներուն դէմ բազմաթիւ պատերազմներ մղեցին ու յաղթանակներ տարին, եւ այդ բոլորը արձանագրուած են «Տիրոջ պատերազմներու գիրքին մէջ» (Թ. 21.14):

2.- Յեսուի գիրքին մէջ, Գաբաւոնի նշանաւոր պատերազմին առիթով կը կարդանք. «Միթէ ասիկա Ուղիղին գիրքին մէջ գրուած չէ՞» (Յես 10.13: Հմմտ Բ. Թգ 1.18):

3.- Թագաւորաց Գ. գիրքին մէջ, Սողոմոնի պատմութեան աւարտին կը կարդանք. «Եւ Սողոմոնի մնացորդ պատմութիւնը եւ անոր բոլոր ըրածները եւ անոր իմաստութիւնը՝ ահա Սողոմոնի պատմութեան գիրքին մէջ գրուած են» (Գ. Թգ 11.41):

4.- Նոյն գիրքին մէջ, Սողոմոնի թագաւորութիւնը երկուքի բաժնող Երոբոամի համար կը կարդանք. «Եւ Երոբոամի մնացորդ պատմութիւնը... ահա Իսրայէլի թագաւորներուն Յիշատակաց գիրքին մէջ գրուած է» (Գ. Թգ 14.19):

5.- Սողոմոնի որդիին՝ Ռոբոամի կեանքի աւարտին, նոյն գիրքը կը վկայէ. «Եւ Ռոբոամի մնացորդ պատմութիւնը եւ անոր բոլոր ըրածները ահա Յուդայի թագաւորներուն Յիշատակաց գիրքին մէջ գրուած են» (Գ. Թգ 14.29):

6.- Եհովայի պաշտամունքը վերահաստատող եւ տաճարը բարեկարգող Եոսիա («Յովսիա») բարեպաշտ թագաւորին մահուան առիթով կը կարդանք, թէ «Երեմիա [մարգարէ] Եոսիայի վրայ ողբ ըսաւ, եւ բոլոր երգեցողները, այր ու կին, մինչեւ այսօր իրենց ողբերուն մէջ կը յիշեն Եոսիան, եւ այդ ողբերը երգելու սովորութիւնը մտցուցին Իսրայէլի մէջ. եւ ահա [անոնք] ողբերու [գիրքին] մէջ գրուած են» (Բ. Մն 35.25), եւլն:

Այսպէս, Աստուածաշունչը այժմ մեզի անձանօթ գիրքեր կը յիշատակէ (տե՛ս նաեւ Ա. Մն 29.29: Բ. Մն 12.15, 20.34. Եզր 4.15: Եսթ 2.23, 9.32), որոնք թէպէտ Աստուծոյ ժողովուրդին պատմութեան աղբիւրներն են, բայց Աստուածաշունչին մաս չեն կազմած եւ չեն կազմեր:

Յստակ կը դառնայ, որ սկիզբէն իսկ կար գատորոշումը «աստուածաշունչ» գիրքերուն եւ ոչ-աստուածաշունչ գիրքերու: Ամէն գրուած բան աստուածաշունչ չէր նկատուեր, նոյնիսկ եթէ անիկա կը խօսէր «Տիրոջ պատերազմներուն» մասին, կամ կը պատմէր Տիրոջ ծառային՝ Յեսուի մասին:

ԶԱՐԵՀ ԱՐՔ. ԱԶՆԱԻՈՐԵԱՆ (ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ 2)





## ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ

### Ո՛վ է Աստուած:

Ինչպէս որ տեսանք Հաւատամքի մէջ, Աստուած է բոլոր տիեզերքին արարիչը, եւ Տէր Յիսուս-Քրիստոսով յայտնուած եւ բացատրուած Հայրը:

### Ո՛ր է Աստուած:

Աստուած մարդոց պէս մարմնաւոր էակ մը չէ, որ տեղ ունենայ: Հոգի է Ան եւ ամենուրեք, այսինքն՝ ամէն տեղ:

### Ինչ ըսել է աստուածաբանութիւն:

Աստուածաբանութիւն կը նշանակէ պաշտել զԱստուած, ծառայել Աստուծոյ: Մարդիկ կը ծառայեն Աստուծոյ երբ կը սիրեն զայն իրենց բոլոր հոգիով եւ կը պահեն աստուածային պատուիրանքը եւ կ'աղօթեն անոր:

### Ինչո՞ւ համար աստուածաբանութիւն պիտի ըլլանք:

Որովհետեւ Աստուած մեր արարիչն է. մեր վայելած բոլոր բարիքները ան կու տայ մեզի. ան սիրեց մեզ եւ միշտ կը սիրէ:

### Աստուած ինչպէ՞ս կը սիրէ մեզ:

Սուրբ Աւետարանի մէջ կը կարդանք. Աստուած այնքան սիրեց աշխարհը (մարդկութիւնը), որ նոյնիսկ իր Միածին Որդին տուաւ անոր համար (Յի 3.16), այսինքն Տէր Յիսուս-Քրիստոսը, որ յայտնեց մարդոց, թէ ո՛վ է Աստուած եւ թէ ինչպէս պէտք է աղօթել իրեն:

### Աստուած կը տեսնուի:

Ո՛չ: Քանի որ Աստուած հոգի է, չի տեսնուիր մարմնի աչքերով. բայց կը տեսնուի կամ կը յայտնուի մաքուր սիրտ ունեցողներուն: Սուրբ Աւետարանը կ'ըսէ. «Երանի անոնց որ մաքուր սիրտ ունին. որովհետեւ անոնք զԱստուած պիտի տեսնեն» (Մտ 5.8):

### Աստուած ուրիշ կերպով ալ կը տեսնուի:

Այո: Մեր Տէրը կ'ըսէ. «Ան որ զիս տեսաւ, Հայրը տեսաւ» (Յի 14.9): Այսինքն անոնք որ կը սիրեն Տէր Յիսուսը եւ կ'ապրին անոր կեանքը, անոնք կը տեսնեն զԱստուած:

### Աստուած ինչ ստորոգելիներով նկարագրուած է Աւետարանի մէջ:

Աստուած ամէնէն բարձր կատարելութիւնն է. ասոր համար է որ Տէրն մեր ըսաւ. «Կտարեալ եղէք ձեր երկնաւոր Հօր պէս» (Մտ 5.48):

Աստուած բարի է (Ղկ 18.9):

Աստուած ճշմարիտ է (Յի 17.3):

Աստուած սէր է (Ա. Յի 4.8):

### Այս կատարեալ, բարի ճշմարիտ, սէր եւ այլն, ստորոգելիները (կամ յատկանիշները), ինչ նշանակութիւն ունին մեր գործնական կեանքին մէջ:

Մարդ ստեղծուած է աստուածային դէմքով. հետեւաբար, պահելու համար իր աստուածային նկարագիրը, մարդ պէտք է աշխատի ըլլալ միշտ կատարեալ, բարի, ճշմարիտ եւ սիրով զեղուն:

### Ո՛րն է այս բոլոր ստորոգելիներուն հիմը:

Սէրը: Անկեղծ սէր ունեցող քրիստոնէական կ'ըլլայ բարի, ճշմարիտ եւ կատարեալ:

### Սիրոյ մասին ինչքն ըսաւ մեր Տէրը:

Սիրեցէք զիրար, ձեր անձին պէս, նոյնիսկ սիրեցէք ձեր թշնամիները (Մտ 5, Մր 12, Ղկ 6): Նոր պատուիրան մը կու տամ ձեզի, որ սիրեք զիրար. ինչպէս որ ես սիրեցի ձեզ, դուք ալ այնպէս սիրեցէք զիրար (Յի 13.34):

Կրնանք ըսել, թէ ամբողջ Նոր Կտակարանի բարոյականը հիմնուած է սիրոյ վրայ: Յովհաննու Աւետարանը եւ Թուղթը, ինչպէս նաեւ Ա. կորնթացիներուն 13-րդ գլուխը շատ կարեւոր են քրիստոնէական սիրոյ արժէքը հասկնելու համար:

### Մարդիկ արդէն չեն սիրեր զիրար:

Մարդիկ անշուշտ կը սիրեն զիրար, եւ կը սիրեն նաեւ ուրիշ շատ բաներ. սակայն այս սէրը հիմնուած է շահու կամ պէտքի կամ հաճոյքի վրայ:

Աստուածային սէրը, որուն վրայ է խօսքը, շահախնդրական չէ: Քրիստոնէական սէր սիրով սիրելու են զիրար, որպէսզի կատարեալ ըլլան իրենց երկնաւոր Հօր նման:

### Կարելի է այս աշխարհի մէջ, որ չարիքներով լի է, աստուածային սիրով սիրել զիրար:

